

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2014թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ | ԿԻՍԱՄՅԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՎԱՆԱԶՈՐ 2014թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2014թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ I ԿԻՍԱՄՅԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ		3
2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ		5
1.	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	10
	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	11
2.	2.1. Կրթություն	11
	2.2. Մշակույթ և սպորտ	14
	2.3. Առողջապահություն	15
	2.4. Սոցիալական պաշտպանություն	17
	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	21
3.	3.1. Գյուղատնտեսություն	21
	3.2. Բնապահպանություն	25
4.	ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	29
	ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐ	30
5.	5.1. Ճանապարհաշինություն	30
	5.2. Ջրամատակարարում ու ջրահեռացում	32
	5.3. Գազամատակարարում	34
6.	ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	35
7.	ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	37
8.	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	39
	ՀԱՎԵԼՎԱԾ 1. 2014 թ.ՏԱՊ-ով Լոռու մարզում նախատեսված միջոցառումների կատարման (I կիսամյակ) վերաբերյալ	44
	ՀԱՎԵԼՎԱԾ 2. Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կատարման եռամսյակային (աճողական) համամասնություններն ըստ ծրագրերի, ծախսատեսակների և կատարողների (առանց օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված նպատակային վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծախսերի)	54

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է Լոռու 2014-2017թթ. ՄՁԾ շրջանակում ստեղծված մարզպետարանի մոնիտորինգի և գնահատման խմբի կողմից Լոռու մարզային զարգացման ծրագրի 2014թ. Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների և կիսամյակում իրականացված աշխատանքների վերլուծության հիման վրա:

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի և հաստատվել է ՀՀ Կառավարության 2014թ. փետրվարի 6-ի թիվ 113-Ն որոշմամբ: ՄՁԾ-ի կազմման ընթացքում մարզպետարանում ձևավորվել են ոլորտային յոթ աշխատանքային խմբեր, որոնք համաձայն Լոռու մարզպետի 2009 թվականի փետրվարի 25-ի թիվ 49 Ա որոշման գործել են հետևյալ ուղղություններով.

- ❖ Մարզի կայուն զարգացում,
- ❖ Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման շոշափելի արդյունքների արձանագրում,
- ❖ Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում,
- ❖ Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում,
- ❖ Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման նպաստավոր, հավասար հնարավորությունների ու բարենպաստ մրցակցային դաշտի ստեղծում,
- ❖ Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում,
- ❖ Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում,
- ❖ Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում,
- ❖ Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում,
- ❖ Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում,
- ❖ Մարզպետարանի կարողությունների ուժեղացում,
- ❖ Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում,
- ❖ Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում,
- ❖ Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում,
- ❖ Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում,
- ❖ Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:
- ❖ Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 03.03.2014թ. թիվ 28-Ա հրամանով (հավելված 2) հաստատվել է ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի 2014թ. Տարեկան աշխատանքային պլանը, որի նպատակն է աջակցել ՄՁԾ-ի իրականացման աշխատանքներին: ՏԱՊ-ի թիրախներն են.

- Համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄՁԾ-ի գերակա նպատակների իրականացման շուրջ:
- Կապել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄՁԾ-ի արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» համակարգի օգնությամբ:
- Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները

տրամաբանական հենքում:

- Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումներն իրականացնելու համար:
- Սահմանել դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

Ընդհանուր առմամբ, ՏԱՊ-ում ներկայացված են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու է մարզպետարանը, ինչպես նաև արձանագրված են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու է ՄՁԾ մոնիտորինգի համակարգը: Այս հաշվետվության մեջ վերլուծված են ՄՁԾ յոթ ոլորտներում («Արդյունաբերություն, մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն», «Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում», «Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր», «Առողջապահություն և սոցիալական ապահովություն», «Քաղաքաշինություն», «Ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում)», «Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն») 2014թ. ՏԱՊ-ով նախատեսված և I կիսամյակի ընթացքում իրականացված միջոցառումների ամփոփ նկարագրությունը ըստ ոլորտների:

Հավելված 1-ում բերված է տեղեկատվություն 2014 թ.ՏԱՊ-ով Լոռու մարզում նախատեսված միջոցառումների վերաբերյալ

Հավելված 2-ում բերված է տեղեկատվություն 2014թ. I կիսամյակի ընթացքում Լոռու մարզի համայնքներում ծրագրերի իրականացման վերաբերյալ:

Հավելված 3-ում բերված է տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ծրագրերի (Լոռու մարզ), ծախսատեսակների և կատարողների վերաբերյալ:

2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ըստ Լոռու մարզի 2014-2017թթ. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կարիքների գնահատման՝ անհրաժեշտ գումարը 2014թ. եղել է **45,079,554.7** հազ. դրամ: 2014թ. ՏԱՊ-ով պլանավորվել է կատարել 41,494,024.117 հազ դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝

- ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝ **5,636,614.70** հազ. դրամ, այդ թվում՝
 - ✓ Սեփական միջոցներ՝ 1,384,191.70 հազար դրամ,
 - ✓ Վարկային միջոցներ՝ 4,252,423.00 հազար դրամ,
- Միջազգային կազմակերպություններ և դոնորներ՝ **42,000.00** հազար դրամ,
- Համայնքային բյուջեների ներդրումներ՝ **325,629.42** հազար դրամ,
- Մասնավոր հատվածի ներդրումներ՝ **34,131,000.00** հազար դրամ,
- Ֆինանսավորման այլ աղբյուրներ՝ **1,358,780.00** հազար դրամ:

2014թ. հուլիսի 1-ի դրությամբ փաստացի պլանավորվել է կատարել 42,344,027.217 հազ դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝

- ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝ **6,430,214.70** հազ. դրամ, այդ թվում՝
 - ✓ Սեփական միջոցներ՝ 2,131,191.70 հազար դրամ,
 - ✓ Վարկային միջոցներ՝ 4,299,023.00 հազար դրամ,
- Միջազգային կազմակերպություններ և դոնորներ՝ **42,000.00** հազար դրամ,
- Համայնքային բյուջեների ներդրումներ՝ **382,032.52** հազար դրամ,
- Մասնավոր հատվածի ներդրումներ՝ **34,131,000.00** հազար դրամ,
- Ֆինանսավորման այլ աղբյուրներ՝ **1,358,780.00** հազար դրամ:

5-րդ հրատապ ծրագրի հաստատման և համայնքային բյուջեներում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով պլանավորված աշխատանքների ծավալները ավելացել են **850, 003.10** հազար դրամով, այդ թվում՝

- ✓ ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝ **793,600.0** հազար դրամ, (որից 793,600.0 հազար դրամը սեփական միջոցներից (հրատապ ծրագիր) և 46 ,600.0 հազարը՝ վարկային միջոցներից,
- ✓ Համայնքային բյուջեների փոփոխությունից՝ **56,403.10** հազար դրամ, որից ճանապարհաշիջության ոլորտի աշխատանքների համար՝ **39,250.10** հազար դրամ և ջրամատակարարման ոլորտի աշխատանքների համար՝ **17,153.00** հազար դրամ:

2014թ. առաջին կիսամյակում փաստացի իրականացվել է

22,367.0958 մլն դրամի աշխատանքներ, որից՝

- ✓ **1,888.10** մլն-ը ՀՀ պետ. բյուջեի հատկացումներով, այդ թվում՝ **1,543.30** մլն դրամը վարկային միջոցներից և **344.8** մլն դրամը սեփական միջոցներից (44.0 մլն դրամը՝ հրատապ ծրագրի շրջանակներում)
- ✓ **19,955.0** մլն դրամը՝ մասնավոր ներդրողների միջոցներից,
- ✓ **1,358.78** մլն դրամը՝ ֆինանսավորման այլ աղբյուրներով,
- ✓ **35.0** մլն դրամը՝ Միջազգային կազմակերպությունների և դոնորների միջոցներով,
- ✓ **14.1958** մլն դրամը՝ համայնքային ֆոնդային բյուջեների միջոցներով:

**ՀՀ Լոռու մարզի 2014 թվականի զարգացման ծրագրի
ֆինանսավորումն ըստ բնագավառների**

մլն դրամ

Հ/Հ	Ոլորտի անվանումը	2014թ. պլանավորված ֆինանսավորումը, այդ թվում			Իրականացված է 2014թ. առաջին կիսամյակում, այդ թվում		
		Ընդամենը	2014թ. Պետական բյուջեից		Ընդամենը	2014թ. Պետական բյուջեի ֆինանսավորմամբ	
			Ընդամենը	Այդ թվում՝ հրատապ ծրագրով		Ընդամենը	Այդ թվում՝ հրատապ ծրագրով
1.	Արդյունաբերություն և մասնավոր հատված	32,844.000	0.000	0.000	19,085.000	0.000	0.000
2.	Սոցիալական ոլորտներ	2,740.874	1,016.494	225.400	700.000	167.200	9.000
2.1.	Կրթություն	1,590.774	943.994	216.400	246.800	150.000	0.000
2.2.	Մշակույթ և սպորտ	72.500	72.500	9.000	17.200	17.200	9.000
2.3.	Առողջապահություն	1,077.600	0.000	0.000	436.000	0.000	0.000
2.4.	Սոցիալական ապահովություն	0.000	0.000	0.000	0.000	0.000	0.000
3.	Գյուղատնտեսություն և բնապահպանություն	425.998	52.000	40.000	12.000	12.000	0.000
3.1.	Գյուղատնտեսություն	202.000	52.000	40.000	12.000	12.000	0.000
3.2.	Բնապահպանություն	223.998	0.000	0.000	0.000	0.000	0.000
4.	Քաղաքաշինություն	1,095.000	235.000	35.000	995.000	135.000	35.000
4.1.	Բնակարանաշինություն	1,060.000	200.000	0.000	960.000	100.000	0.000
4.2.	Բնակարանային տնտես. և բարեկարգում	35.000	35.000	35.000	35.000	35.000	35.000
5.	Ենթակառուցվածքներ	5,238.155	827.698	446.600	1,575.096	30.600	0.000
5.1.	Ճանապարհաշինություն	929.683	827.698	446.600	38.802	30.600	0.000
5.2.	Զրամատակարարում	4,308.472	0.000	0.000	1,536.294	0.000	0.000
5.3.	Գազամատակարարում	0.000	0.000	0.000	0.000	0.000	0.000
6.	Արտակարգ իրավիճակներ	0.000	0.000	0.000	0.000	0.000	0.000
	Ընդամենը	42,344.027	2,131.192	747.000	22,367.096	344.800	44.000

ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 6-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարման (1-ին կիսամյակ) վերաբերյալ

(հազ. դրամ)

Հ/Հ	Ոլորտը (ֆինանսավորման աղբյուրը)	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2014թ. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի ֆինանսավորումը	01.07.2014թ. ՏԱՊ-ով փաստացի կատարված ծրագրերը	Կատարման տոկոսը %
1	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ	25,506,100.00	32,844,000.00	19,085,000.0	58.11
1.1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝				
1.2	Սեփական միջոցներ				
1.3	Վարկային միջոցներ				
1.4	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ		42,000.00	35,000.00	83.33
1.5	Համայնքային բյուջե				
1.6	Մասնավոր ներդրողներ		32,802,000.00	19,050,000.0	58.08
	Այլ աղբյուրներ				
	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ (2+3+4+5)	3,419,040.0	2,740,874.0	700,000.0	25.54
	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝		1,063,094.0	180,200.0	16.95
	Սեփական միջոցներ		1,016,494.0	167,200.0	16.45
	Վարկային միջոցներ		46,600.0	13,000.0	27.90
	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ				
	Համայնքային բյուջե				
	Մասնավոր ներդրողներ		469,000.0	45,000.0	9.59
	Այլ աղբյուրներ		1,208,780.0	474,800.0	39.28
2	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	1,048,000.0	1,590,774.00	246,800.00	15.51
2.1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝		943,994.00	150,000.00	15.89
2.2	Սեփական միջոցներ		943,994.0	150,000.0	
2.3	Վարկային միջոցներ				
2.4	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ				
2.5	Համայնքային բյուջե				
2.6	Մասնավոր ներդրողներ		469,000.00	45,000.00	9.59
	Այլ աղբյուրներ		177,780.00	51,800.00	29.14
3	ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ	494,000.0	72,500.0	17,200.0	23.72
3.1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝		72,500.0	17,200.0	
3.2	Սեփական միջոցներ		72,500.0	17,200.0	
3.3	Վարկային միջոցներ				
3.4	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ				
3.5	Համայնքային բյուջե				
3.6	Մասնավոր ներդրողներ				
	Այլ աղբյուրներ				

4	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	1,312,800.0	1,077,600.0	436,000.0	40.46
4.1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝		46,600.0	13,000.0	27.90
4.2	Սեփական միջոցներ				
4.3	Վարկային միջոցներ		46,600.0	13,000.0	27.90
4.4	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ				
4.5	Համայնքային բյուջե				
4.6	Մասնավոր ներդրողներ				
	Այլ աղբյուրներ		1,031,000.0	423,000.0	41.03
5	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱԵՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	564,240.0	0.0	0.0	
5.1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝				
5.2	Սեփական միջոցներ				
5.3	Վարկային միջոցներ				
5.4	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ				
5.5	Համայնքային բյուջե				
5.6	Մասնավոր ներդրողներ				
	Այլ աղբյուրներ				
6	ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	3,703,193.0	1,095,000.0	995,000.0	90.87
6.1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝		235,000.0	135,000.0	57.45
6.2	Սեփական միջոցներ		235,000.0	135,000.0	57.45
6.3	Վարկային միջոցներ				
6.4	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ				
6.5	Համայնքային բյուջե				
6.6	Մասնավոր ներդրողներ		860,000.0	860,000.0	100.00
	Այլ աղբյուրներ				
7	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	3,211,000.0	202,000.0	12,000.0	5.94
7.1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝		52,000.0	12,000.0	23.08
7.2	Սեփական միջոցներ		52,000.0	12,000.0	23.08
7.3	Վարկային միջոցներ				
7.4	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ				
7.5	Համայնքային բյուջե				
7.6	Մասնավոր ներդրողներ				
	Այլ աղբյուրներ		150,000.0	0.0	0.00
8	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	223,998.7	223,998.4	0.0	0.00
8.1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝				
8.2	Սեփական միջոցներ				
8.3	Վարկային միջոցներ				
8.4	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ				
8.5	Համայնքային բյուջե		223,998.4	0.0	0.00
8.4	Մասնավոր ներդրողներ				
	Այլ աղբյուրներ				
	ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ (9+10+11)	8,401,223.0	5,238,154.8	1,575,095.8	
	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝		5,080,120.7	1,560,900.0	
	Սեփական միջոցներ		827,697.7	30,600.0	
	Վարկային միջոցներ		4,252,423.0	1,530,300.0	
	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ				
	Համայնքային բյուջե		158,034.1	14,195.8	
	Մասնավոր ներդրողներ				
	Այլ աղբյուրներ				

9	ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	5,198,000.0	929,682.9	38,801.5	4.17
9.1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝		827,697.7	30,600.0	3.70
9.2	Սեփական միջոցներ		827,697.7	30,600.0	3.70
9.3	Վարկային միջոցներ				
9.4	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ				
9.5	Համայնքային բյուջե		101,985.2	8,201.5	8.04
9.6	Մասնավոր ներդրողներ				
	Այլ աղբյուրներ				
10	ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ	2,941,423.0	4,308,471.9	1,536,294.3	35.66
10.1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝		4,252,423.0	1,530,300.0	35.99
10.2	Սեփական միջոցներ		0.0	0.0	
10.3	Վարկային միջոցներ		4,252,423.0	1,530,300.0	35.99
10.4	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ				
10.5	Համայնքային բյուջե		56,048.9	5,994.3	10.69
10.6	Մասնավոր ներդրողներ				
	Այլ աղբյուրներ				
11	ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ	261,800.0	0.0	0.0	
11.1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝				
11.2	Սեփական միջոցներ				
11.3	Վարկային միջոցներ				
11.4	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ				
11.5	Համայնքային բյուջե				
11.6	Մասնավոր ներդրողներ				
	Այլ աղբյուրներ				
	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	615,000.0	0.0	0.0	
	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝				
	Սեփական միջոցներ				
	Վարկային միջոցներ				
	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ				
	Համայնքային բյուջե				
	Մասնավոր ներդրողներ				
	Այլ աղբյուրներ				
	ԸՆԴԱՄԵՆԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ	45,079,554.7	42,344,027.217	22,367,095.8	52.82
1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝		6,430,214.70	1,888,100.0	29.36
2	Սեփական միջոցներ		2,131,191.70	344,800.0	16.18
3	Վարկային միջոցներ		4,299,023.00	1,543,300.0	35.90
4	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ		42,000.00	35,000.0	83.33
5	Համայնքային բյուջե		382,032.52	14,195.8	3.72
6	Մասնավոր ներդրողներ		34,131,000.00	19,955,000.0	58.47
	Այլ աղբյուրներ		1,358,780.00	474,800.0	34.94

1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մարզի տնտեսության առաջատար բնագավառի՝ արդյունաբերության մասով 2014-2017թթ. Լոռու մարզի ՄՁԾ-ով կարիքի գնահատում չի կատարվել, քանի որ այս բնագավառում ներդրումների բացարձակ մեծամասնությունն ընկնում է մասնավոր հատվածի վրա:

Չնայած համաշխարհային տնտեսությունում տագնապալի որոշակի սպասումների, 2014 թվականի համար մարզի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից ՄՁԾ-ով պլանավորվել է ընդամենը **25,506.10** մլն դրամի ներդրումներ, այդ թվում ըստ ոլորտների՝

- ❖ Հանքարդյունաբերություն **10,250.00 մլն դրամ**
- ❖ Էներգետիկա **9,303.60 մլն դրամ**
- ❖ Մշակող արդյունաբերություն **1,852.50 մլն դրամ**
- ❖ Տեղեկատվական տեխնալոգիաներ **4,100.00 մլն դրամ**

Մարզի արդյունաբերության և մասնավոր հատվածում պլանավորված ներդրումների գերակշիռ մասը (21,406,100.0 մլն դրամ հանքարդյունաբերության, էներգետիկայի և մշակող արդյունաբերության ոլորտներում է:

2014թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջեն կազմել է **32,802,000.0** մլն դրամ:

2014 թվականի 1-ին կիսամյակում մարզի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից իրականացվել է ընդամենը **19,085.00** մլն դրամի ներդրումներ, մասնավորապես.

- ❖ հանքարդյունաբերություն
 - ✓ «Վալլեքս» ընկերությունների խումբ («Թեղուտ», «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ներ)՝ **18.450.00** մլն դրամ (45.0 մլն ԱՄՆ դոլար)
- ❖ Այլ արդյունաբերական ձեռնարկություններ
 - ✓ ք. Սպիտակի թոչնաֆաբրիկայի կառուցում՝ **600.00** մլն դրամ:

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2014 թ. ՄՁԾ-ով առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործնթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով անցում կատարել մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը՝

- ✓ ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում,
- ✓ Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգային դրույթների իրականացում,
- ✓ ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի կազմակերպում:

Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի Լոռու մասնաճյուղը հաջողությամբ շարունակում է իր աշխատանքը մարզում:

2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

2.1. Կրթություն

Համաձայն Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. տարեկան աշխատանքային պլանի՝ մարզի կրթության ոլորտում շարունակվել է Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման պետական քաղաքականության իրականացումը:

Կրթության որակի բարձրացումը դիտվել է որպես ոլորտի զարգացման գերակա նպատակ:

Ուշադրություն է դարձվել միջնակարգ կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, ուղղված դպրոցների կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը:

2014թ. ՏԱՊ-ի առաջին կիսամյակում շարունակվել են դպրոցների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման աշխատանքները, ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացմանը, դպրոցների՝ որպես ինքնակառավարման մարմինների ուժեղացմանն ուղղված միջոցառումները:

Առաջին կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի 151 հանրակրթական դպրոցների խորհուրդներին՝ դպրոցների տարիֆիկացիաների կազմման, հաստիքացուցակների ձևավորման, ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական հարցերի քննարկումների կազմակերպման, տնօրենների ու ուսուցիչների ընտրությունների և այլ հարցերում:
- 2014թ. հունվար-փետրվար ամիսներին համակարգվել է մարզի 547 ուսուցիչների պարզ ընթացակարգով ատեստավորման նախապատրաստական աշխատանքների գործընթացը, մասնավորապես, ցուցակների կազմում ըստ մասնագիտությունների, համագործակցություն կրթության ազգային ինստիտուտի մարզային մասնաճյուղի հետ՝ պարզ ընթացակարգով ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:
- Նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ են տարվել միասնական քննություններին մասնակցող 956 շրջանավարտների համար, իրականացվել է մարզի դպրոցների պետական ավարտական քննությունները, ավարտական քննությունները և գիտելիքների ստուգումը պատշաճ մակարդակով կազմակերպելու, անցկացնելու և ընթացքը վերահսկելու ծրագիրը՝ հաստատված Լոռու մարզպետի կողմից:
- Պատշաճ մակարդակով կազմակերպվել և անցկացվել են դպրոցականների առարկայական օլիմպիադաների դպրոցական, տարածքային և մարզային փուլերը՝ 42 աշակերտ դարձել է հանրապետական փուլի տարբեր կարգի մրցանակակիր:
- Մարզի պատանի հրշեջ-փրկարարների թիմը մասնակցել է Երևանում կազմակերպված մրցումների հանրապետական փուլին:
- Ամփոփվել են «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» և «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների արդյունքները: Ամփոփվել են նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու քրիստոնեական դաստիարակության կենտրոնի կողմից կազմակերպված «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» և «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների արդյունքները:
- Կազմակերպվել և անց է կացվել է նաև 2014 թվականի ռուսաց լեզվի «Հայաստանի ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչ» մրցույթի Լոռու մարզային փուլը: Լավագույնները մասնակցել են հանրապետական փուլին:
- 2014թ-ի հունվար-մայիս ամիսների ընթացքում Լոռու մարզում առաջին անգամ ՀՀ Պաշտպանության, ԿԳ նախարարությունների և Լոռու մարզպետարանի հովանու ներքո անց է կացվել շարադրությունների ամենամյա մրցույթ՝ «Իմ Հայրենիքը» խորագրով՝

միտված մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության զարգացմանը, անկախ և հզոր հայրենիքի կերտման գաղափարի խթանմանը մեր երիտասարդության շրջանում: Մրցույթն անց է կացվել Լոռու մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների միջև:

- Կազմակերպվել և անց է կացվել Ռուսաստանի Դաշնության «Живая классика» պատանի ընթերցողների մրցույթի տարածքային և մարզային փուլերը: Վանաձորի թիվ 10 ավագ դպրոցի աշակերտը դարձել է հանրապետական փուլի հաղթող:
- Կազմակերպվել և անց է կացվել «Մեկ դար և ավելի...» խորագրով համահայկական մանկապատանեկան նկարչական 5-րդ մրցույթ-փառատոնի մարզային փուլը:
- Նախապատրաստվել և ԿԳ նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն՝ ուսումնական հաստատություններում ահաբեկչության դեմ պայքարի կրթադաստիարակչական աշխատանքների կատարման և բնական և տեխնածին աղետներից պաշտպանվելու համար համապատասխան ստորաբաժանումների ստեղծման և պարբերական հրահանգավորման, քաղաքաշտպանության միջոցառումների համակարգի, բաց դասերի, ուսումնավարժությունների և տարիանումների վերաբերյալ:
- Ապահովվել է մարզի գյուղական համայնքների դպրոցների ընդգրկումը <<Dasaran.am>> կրթական ծրագրում:
- Նախապատրաստվել է Լոռու մարզի հանրակրթական դպրոցների դասագրքերի 2014-2015 ուստարվա հայտերը:
- Ապահովվել է «Դպրոցական սնունդ» ծրագրում ընդգրկված դպրոցների հաշվետվությունների ներկայացումը:
- Ի կատարումն «Դպրոցականների՝ 2014 թվականի ամառային հանգստի կազմակերպման նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի՝ 15.05.2014թ. թիվ 433-Ա որոշման 3-րդ կետի՝ 2014թ. հունիսի 20-ին կազմակերպվել է Լոռու մարզի զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 115 երեխաների ընտրությունը եւ ընդգրկումը Հանքավանի «Լուսաբաց» մանկական առողջարարական ճամբար:
- Վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմում իրականացվել են ուսումնասիրություններ Ստեփանավանի, Մարգահովտի, Հոբարձու, Դսեղի ՆՈՒՀ-երում:

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. կրթության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **1,048.00** մլն դրամ, սակայն ՏԱՊ-ով փաստացի պլանավորվել է կատարել **1,374.374** մլն դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **727.594** մլն դրամը պետ. բյուջեով, **469.00** մլն դրամը՝ մասնավոր ներդրումներով և **177.780** մլն դրամը՝ ֆինանսավորման այլ աղբյուրներով:

Մարզի կրթության ոլորտում 2014թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված **1,590.774** մլն դրամի (**1,590.774 մլն դրամ = 1,374.374 մլն դրամ՝ ՏԱՊ + 216.40 մլն դրամ՝ հրատապ V փուլ**) դիմաց՝ առաջին կիսամյակում իրականացվել է **246.80** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետ. բյուջեից նախատեսված **943.994** մլն դրամի (**943.994 մլն դրամ = 727.594 մլն դրամ՝ ՏԱՊ + 216.40 մլն դրամ՝ հրատապ V փուլ**) դիմաց՝ **150.00** մլն դրամի աշխատանքներ: Հիրատապ V փուլի ծրագրով առաջին կիսամյակում աշխատանքներ չեն իրականացվել:

Աղյուսակ 2.1.1. բերված են կրթության ոլորտում 2014թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների:

Կրթության ոլորտում 2014թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Աղյուսակ 2.1.1

Հ/Հ	Ֆինանսավորման աղբյուրը, Օբյեկտի և ծրագրի անվանումը	2014թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			01.07.14թ. (մլն դրամ)	այդ թվում հրատապ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	1,590.774	246.800		
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	943.994	150.000		
	ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	727.594	150.000		
1	Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցում	100.000			
2	Մարցի միջնակարգ նոր դպրոցի կառուցում	225.094	150.00		
3	Սպիտակի մանկապատանեկան մարզադպրոցի ըմբշամարտի դահլիճի կառուցում	125.000			
4	«Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի վերակառուցում	277.500			
II	ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	216.400			
	Կրթական օբյեկտների հիմնանորոգում եւ շինարարություն	216.400			
1	Ուրասար համայնքի դպրոցի վերանորոգում	7.30			
2	Ալավերդի համայնքի թիվ 2 դպրոցի տանիքի վերանորոգում	13.52			
3	Ալավերդի համայնքի թիվ 12 դպրոցի տանիքի վերանորոգում	15.60			
4	Ստեփանավան համայնքի թիվ 1 դպրոցի վերանորոգում	16.64			
5	Ձյունաշող համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում	13.52			
6	Բովաձոր համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում	12.72			
7	Վանաձոր համայնքի թիվ 12 դպրոցի տանիքի վերանորոգում	7.24			
8	Վանաձոր համայնքի թիվ 6 դպրոցի տանիքի վերանորոգում	13.52			
9	Վանաձոր համայնքի թիվ 23 դպրոցի տանիքի վերանորոգում	7.54			
10	Վանաձորի համայնքի թիվ 9 դպրոցի վերանորոգում	5.24			
11	Շահումյան համայնքի դպրոցի վերանորոգում	16.64			
12	Շիրականուտ համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում	8.24			
13	Ալավերդի համայնքի թիվ 1 դպրոցի տանիքի վերանորոգում	13.40			
14	Ալավերդի համայնքի թիվ 8 դպրոցի վերանորոգում	6.30			
15	Թեղուտ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգում	15.60			
16	Արևաշող համայնքի դպրոցի վերանորոգում	30.90			
17	Շենավան համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	12.48			
III	ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ				
IV	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ				
V	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ	469.00	45.00		
	Ստեփանավանում և Տաշիրում մանկապարտեզների կառուցում	469.00	45.00		«ՏԱՇԻՐ» ԲՀ
VI	ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ	177.780	51.800	0.000	
1	Հաղպատի դպրոցի ուժեղացում, վերակառուցում	36.800	36.80		ՀՍՆՀ
2	Վահագնի համայնքի դպրոցի մարզադահլիճի կառուցում	75.580	7.00		ՀՍՆՀ
3	Եղեգնուտի դպրոցի սպորտդահլիճի վերանորոգում, ջեռուցման համակարգի տեղադրում, տանիքի փոխարինում	51.600	5.00		ՀՍՆՀ
4	Ձորագյուղ համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգում	13.800	3.00		ՀՍՆՀ

2.2. Մշակույթ և սպորտ

2014թ. ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում են նաև մշակութային օջախների վերանորոգման և մշակութային միջոցառումների իրականացման աշխատանքները:

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. մշակույթի և սպորտի ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **494.0** մլն դրամ, *սակայն փաստացի պլանավորվել է կատարել 72.5 մլն դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում ամբողջությամբ պետ. բյուջեի ֆինանսավորմամբ*: Մարզի մշակույթի և սպորտի ոլորտում 2014թ. պետ. բյուջեով նախատեսված **72.5** մլն դրամի դիմաց առաջին կիսամյակում իրականացվել է **17.2** մլն դրամի աշխատանքներ Այդուսակ 2.1.2 –ում բերված են մշակույթի և սպորտի ոլորտներում 2014 թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների:

Մշակույթի և սպորտի ոլորտներում 2014 թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների Այդուսակ 2.1.2

Հ/Հ	Ֆինանսավորման աղբյուրը, Օբյեկտի և ծրագրի անվանումը	2014թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			01.07.14թ. (մլն դրամ)	այդ թվում հրատապ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	72.500	17.200	9.00	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	72.500	17.200	9.00	
	ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	63.500	8.200		
1	Քոբայրավանքի վերանորոգում	16.00	2.00		
2	Սանահինի վանքի վերանորոգում	18.30	2.00		
3	«Լոռի Բերդ» ամրոցի հիմնանորոգում	15.00	3.00		
4	Դսեղի Քառասնից մանկաց վանքի նախագծա-հետազոտական աշխատանքներ	1.20	1.20		
5	Աքորու Բզավոր եկեղեցու վերանորոգում	13.00			
II	ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	9.00	9.00		
	«Քաունթեր փարթ» կազմակերպության կողմից Դեբեդ համայնքի համայնքային կենտրոնի հիմնանորոգման ծրագրի համայնքի համաֆինանսավորման նպատակով համայնքին աջակցության ցուցաբերում		9.00	9.00	
III	ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ				
IV	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ				
V	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ				
VI	ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ				

Մշակույթի ոլորտում 2014թ. առաջին կիսամյակում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ✓ Բարձր մակարդակով կազմակերպվել և անց են կացվել Ամանորին և Սուրբ Ծննդին, Հայոց բանակի կազմավորման 22-րդ տարելիցին, Կանանց միջազգային տոնին,

Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան, ՀՀ Անկախության 22-ամյա հոբելյանին նվիրված մի շարք միջոցառումներ, որոնց մասնակցել են մանկավարժներ, արվեստագետներ, Հայրենական Մեծ պատերազմի և Արցախյան գոյամարտին մասնակցած վետերաններ, մտավորականներ:

- ✓ Կազմակերպվել և անց է կացվել մի շարք փառատոներ, համերգներ, ներկայացումներ եւ ցուցահանդեսներ, որտեղ իրենց ակտիվ մասնակցություն են ցուցաբերել մարզի տարբեր շրջաններից հրավիրված երաժշտական և արվեստի դպրոցների շնորհալի պատանի կատարողները:

Սպորտի ոլորտում 2014թ. առաջին կիսամյակում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Թեժ լեռան հովտում կազմակերպվել և անց է կացվել «Լոռվա ձմեռ-2014» 43-րդ ավանդական մարզատոնահանդեսը: Համաձայն միջոցառման ծրագրի, կազմակերպվել և անց է կացվել տարբեր մարզաձևերից և ազգային խաղերից մրցաշարեր, որոնց հաղթողները պարգևատրվել են պատվոգրերով և նվերներով:
- ✓ Վանաձորում անցկացվել է ավանդական դարձաց «ՀՀ Լոռու մարզպետի գավաթ» մրցաշարը, որտեղ հաղթող է ճանաչվել «Վանաձոր» թիմը, երկրորդ տեղը գրավել է Լոռու մարզպետարանի թիմը, իսկ երրորդ տեղը՝ ՀՀԿ-ի թիմը: Հաղթողները պարգևատրվել են մարզպետի պատվոգրով, մարզպետի գավաթով, մեդալներով, դրամական պարգևներով:
- Լոռու մարզի քաղաքային համայնքներում կազմակերպվել է ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի առաջին (համայնքային) և երկրորդ՝ մարզային փուլերը:

2.3. Առողջապահություն

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶԾ-ի ոլորտային գերակա նպատակ:

Այս նպատակին է միտված առողջության առաջնային պահպանման մակարդակի, առաջնային և երկրորդային բուժօգնության բուժհաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները:

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. առողջապահության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **1,312.80 մլն** դրամ, փաստացի պլանավորվել է այլ միջոցներով կատարել **1,031.00 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝ 31.00 մլն դրամը ՀՄՆՀ –ի միջոցներով և **1,000.0** մլն դրամը՝ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի համաֆինանսավորմամբ:

ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի կողմից 2014թ. հայտարարվել են մրցույթներ՝ վարկային միջոցներով Վանաձորի բժշկական կենտրոնի նոր շենքի և «Լեռնապատ ԱԿ» ՓԲԸ-ի շենքի շինարարության նպատակով: Նշված աշխատանքների 2014թ. ծավալները կհստակեցվեն մրցույթների հաղթողներին որոշելուց հետո: Առ 01.07. 2014թ. տեղի է ունեցել միայն «Լեռնապատ ԱԿ» ՓԲԸ-ի շենքի կառուցման ծրագրի մրցույթը (աշխատանքների ծավալը 46.60 մլն դրամ) և 1-ին կիսամյակում իրականացվել է 13.0 մլն դրամի աշխատանքներ:

2014 թվականի 1-ին կիսամյակում ոլորտում ֆինանսական բոլոր աղբյուրների հաշվին իրականացվել է **436.000** մլն դրամի կապիտալ ներդրում, որից **13.00** մլն դրամը՝ վարկային միջոցներով, իսկ **423.00** մլն դրամը՝ այլ միջոցներով («ՏԱՇԻՐ» ԲՀԿ, ՀՄՆՀ):

Առողջապահության ոլորտում 2014թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների
Աղյուսակ 2.2.1

Հ/Հ	Ֆինանսավորման աղբյուրը, Օբյեկտի և ծրագրի անվանումը	2014թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			01.07.14թ. (մլն դրամ)	այդ թվում հրատապ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	1,031.000	436.000		
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ				
II	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)				
III	ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ				
1	Վանաձորի բժշկական կենտրոնի կառուցում				Մրցույթը չի կայացել
2	«Լեռնապատ ԱԿ» ՓԲԸ-ի շենքի կառուցում	46.60	13.00		46.6 մլն դր
IV	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ				
V	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ				
VI	ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ	1,031.000	423.000		
1	Ալավերդու հիվանդանոցի դիախերձարանի կառուցում	31.000	23.000		ՀՄՆՀ
2	Վանաձորի բժշկական կենտրոնի կառուցում (համաֆինանսավորում)	1,000.000	400.000		«Տաշիր» ԲՀ

2014թ. առաջին կիսամյակում՝

- Ապահովվել է մարզի ԲՊ բժշկական ծառայության մասնակցությունը մարզային փրկարարական վարչության կողմից տարբեր թեմաներով կազմակերպված հրամանատարաշտաբային ուսումնավարություններին՝ տարածաշրջանների բժշկական ծառայության պետերի, մարզի բժշկական ծառայության ղեկավար կազմի պատրաստականությունը ստուգելու և կատարելագործելու նպատակով:
- Մարզի գլխավոր մասնագետների մասնակցությամբ առողջապահական ընկերություններում անց է կացվել համապատասխան ուսումնասիրություններ՝ ցուցաբերելով մեթոդական աջակցություն և օգնություն տեղ գտած թերությունները վերացնելու նպատակով:
- ՀՀ առողջապահության նախարարության ակադեմիկոս Ս.Խ.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի կողմից «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային համաձայնագրով ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում և Ծաղկաձորում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին 2014թ. Լոռու մարզից մասնակցել են 5 :
- Մարզի առողջապահական ընկերություններում վերահսկվել է սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացումը, ինչպես

նաև բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ոլորտին առնչվող հարցերի լուծումը:

- Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում արդյունավետ գործում է (0322) 2-33-99 հեռախոսահամարով թեժ գիծը՝ ազգաբնակչության կողմից բարձրացված հարցերին արագ արձագանքելու նպատակով:
- 2014թ. բուժաշխատողի օրվա կապակցությամբ կազմակերպվել և հանդիսավորությամբ նշվել է մարզային նշանակության ամենամյա միջոցառում «Լավագույն բժիշկ» անվանակարգով: Մարզպետի կողմից ստեղծված հանձնաժողովի կողմից ընտրվել և պարգևատրվել են վեց լավագույն մասնագետներ, բազմաթիվ բուժաշխատողներ արժանացել են պատվոգրերի և շնորհակալագրերի:
- «Լոռու առողջապահություն» հիմնադրամը մարզի մի շարք առողջապահական ընկերությունների տրամադրել է 550.0 հազ դրամ՝ գույք և բժշկական սարքավորումներ ձեռք բերելու նպատակով, և 1125.0 դրամ՝ հիվանդ բուժաշխատողների բուժօգնության նպատակով:

Մարզում առողջապահական ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ ընթանում են սերտ համագործակցային աշխատանքներ՝ «Հիպոկրատ» հունական հիմնադրամի, «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության, Ֆրանսահայ բժիշկների միության, «Երուսաղեմի սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի, ԱՄՆ ՄՁԳ-ի Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների (ԱԱՊԲ) ծրագրերի հետ:

2.4. Սոցիալական պաշտպանություն

2014թ. ՄԶԾ թվով հինգ ծրագրային ուղղություններով առաջարկվել են 5 ծրագրեր, ըստ որոնց ոլորտային նպատակ է դիտվում բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը, որի կենսագործմանը կուղղորդվեն **Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների համակարգի գործունեության արդյունավետությանը և որակի բարձրացմանը միտված նյութատեխնիկական պայմանների բարելավմանը** (առաջարկվել է՝ «Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում և սոցիալական տարբեր ծառայությունների գործունեության կազմակերպում և համակարգում» թիվ 1 ծրագիրը), **Սոցիալական ապահովության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստումը**, Սոցիալական ապաստարկման բնագավառի մատչելի միջավայրի ապահովումը (առաջարկվել է՝ «Լոռու մարզի քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցում» թիվ 2 ծրագիրը), **Տարածքային սոցիալական պլանների կազմում և իրականացումը** (առաջարկվել է՝ «Աջակցություն ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից իրականացվող «Աշխատանքային միգրացիայի սոցիալական հետևանքների մեղմացում և տեղական զարգացման գործընթացում միգրանտների ներգրավվածության մեծացում» ծրագրին՝ ենթածրագրերի (տարածքային սոցիալական պլանների) միջոցով» համագործակցային թիվ 3 ծրագիրը), **Աջակցություն բնակարանային ապահովման քաղաքականությանը** (առաջարկվել են «Փախստականների ընտանիքների բնակարանային ապահովում» թիվ 4 և «Ջոկիված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովում» թիվ 5 ծրագրերը):

Ծրագրային աշխատանքների իրականացման համար բացի պետական բյուջեի միջոցներից ակնկալվում են նաև որոշակի ներդրումներ միջազգային, դոնոր և մասնավոր կազմակերպությունների կողմից, որոնք կնպաստակաուղղվեն ՄԶԾ-ով ոլորտում նախատեսված աշխատանքների իրականացմանը:

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. Սոցիալական պաշտպանության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **564.24 մլն** դրամ: Մարզի սոցիալական ապահովության ոլորտում 2014թ. առաջին կիսամյակի ընթացքում բոլոր ֆինանսական աղբյուրներով միջոցներ չեն տրամադրվել:

2014թ. և սոցիալական ծառայությունների մատչելիությունն ու որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ընդլայնել սոցիալապես խոցելի խմբերին ուղղված աջակցության ծրագրերը, մասնավորապես բարելավել կարիքավոր ընտանիքների, անօգնական տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և գործազուրկների պաշտպանվածությունը, որոնց իրականացման համար նախատեսվում են իրականացնել ընդգրկուն աշխատանքներ, որոնցում կարևորվում է նաև սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների շարունակական աջակցության ցուցաբերումը:

Պետությունը կանոնակարգված աշխատանքներ է իրականացնում ինտեգրված սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների ստեղծման ուղղությամբ, որը ՄԶԳ ծրագրով նախատեսված աշխատանքներից է, որի իրականացմամբ Լոռու մարզում արմատապես կլուծվի այդ կառույցների շենքային պայմանների բարելավման հիմնախնդիրը: Պետական քաղաքականության հիմքում դրված է որակյալ համալիր սոցիալական ծառայությունների մատուցումը, որի իրականացման համար շատ է կարևորվում նաև սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների (պետական, ոչ պետական) համակարգչային տեխնիկայով հագեցվածությունը և համացանցային կապով ապահովումը: Ներկայումս համակարգչային կապով մարզպետարանի հետ կապված են մարզի գրեթե բոլոր համայնքները, իսկ էլեկտրոնային կայք-էջ ունեն փոքրաթիվ համայնքներ (հիմնականում տարածաշրջանային կենտրոնները), գրեթե 7 տոկոսը:

Որակյալ սոցիալական ծառայություններ մատուցելու նախապայման է բնագավում ներգրված աշխատողների մասնագիտական հմտությունների շարունակական կրթությունը:

2014թ. զբաղվածության արդյունավետությունը բարձրացնելու, գործազուրկների և աշխատանք փնտրողների համար աշխատանքի հնարավորությունները մեծացնելու նպատակով ՀՀ կառավարությունը շարունակում է իր նպատակամետ քաղաքականությունը: Զուգահեռաբար համագործակցային գործունեության արդյունքում կարծում ենք, որ հնարավորություն կունենանք իրականություն դարձնել ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից իրականացվող «Աշխատանքային միգրացիայի սոցիալական հետևանքների մեղմացում և տեղական զարգացման գործընթացում միգրանտների ներգրավվածության մեծացում» ծրագիրը, ըստ որի Լոռու մարզում ենթադրվում է կենսագործել թվով երեք ենթածրագրեր (տարածքային սոցիալական պլաններ):

ՄԶԾ առաջարկվել է նաև տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցումը: Նախորդած տարիների արդյունավետ աշխատանքից ելնելով կարող ենք փաստել, որ 2014թ. ևս կապահովվի զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների բնակարանային ապահովման ծրագիրը: Ցանկալի է, որ նույնատիպ՝ բնակապահովման ծրագիր իրականացվի անօթևան փախստականների ընտանիքների համար:

Ծրագրերի իրականացման ուղղությամբ 2014թ. առաջին կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- **Սոցիալական ապահովության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում** ծրագրի շրջանակներում մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, ՏԻՄ, ոչ պետական) սոցիալական աշխատանք կատարող կադրերի վերապատրաստում կարիքների գնահատման հմտությունների զարգացման վերաբերյալ ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցման փորձնական ծրագրի

շրջանակում UNICEF-ի և Համայնքների ֆինանսիստների միության կողմից կազմակերպված 2 դասընթացներին մասնակցել են 25 մարդ (ՄՏՏՏՄ-ների աշխատակիցներ, մարզպետարանի մասնագետներ, կրթության բնագավառի աշխատողներ, ՀԿ-ների ներկայացուցիչներ): Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներին նվիրված դասընթացին մասնակցություն են ունեցել 3 անձ՝ մարզպետարանից՝ 1, ՀԿ սեկտորից («Լիարժեք կյանք» ՀԿ, «Լուսաստղ»՝ 1-ական անձ):

- **Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավում** (ինչի արդյունքում կավելանան խոցելի բնակչության սոցիալական սպասարկման համատեղ իրականացվող ծրագրերը). միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների և ՏԻՄ-երի համատեղ ուժերով իրականացվել են սոցիալական ավելի քան 20 ծրագիր:

- Մարզի որոշ համայնքներ դրամական օգնություն են տրամադրել մի շարք ՀԿ-ների կամ կոնկրետ շահառուներին (Վետերանների խորհուրդ, Խուլերի կազմակերպություն և այլն):

- Լոռու մարզպետարանի կողմից դրամական աջակցություն է ցուցաբերվել առանձին քաղաքացիների կամ կազմակերպությունների: Անհայտ կորած զինծառայողների 14 ընտանիքների տրամադրվել է 20.000-ական դրամ աջակցություն, Վանաձորի տարեցների տանը՝ 100.000 դրամ, Հուլիսի տանը՝ 50.000 դրամ, 2 տարեց անձանց (տարեցների միջազգային օրը)՝ 40.000-ական դրամ, ինչպես նաև տարբեր չափի դրամական աջակցություն տարաբնույթ մշակութային միջոցառումների անցկացման համար (մասնավորապես՝ Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ կազմակերպվել են այցելություններ

- ✓ Վանաձորի մանկատուն՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար տոնական մթնոլորտի ձևավորում, հյուրասիրություն,
- ✓ խնամատար ընտանիք այցելություն, տոնական մթնոլորտի ձեւավորում, հյուրասիրություն և նվիրատվություն: «Հայկական կարիտաս» ԲՀԿ-ի «Խաչվող ուղիներ» կենտրոնի այցելություն, տոնական մթնոլորտի ձեւավորում,
- ✓ Հայ ավետարանչական ընկերակցության Վանաձորի «Շող» երեխաների համայնքային ցերեկային կենտրոնին նվիրաբերվել է հեռուստացույց,
- ✓ Գուգարք համայնքում բնակվող խնամատար երեխային հեծանիվի նվիրատվություն:
- ✓ Հանդիպումներ են կազմակերպվել Թումանյանի տարածաշրջանի Ալավերդի, Ախթալա, Քարինջ եւ Ստեփանավանի տարածաշրջանի Կուրթան, Վարդաբլուր և Գարգառ համայնքների երեխաների հետ:
- ✓ Մարզպետարանի կողմնորոշմամբ 100 տարեկանն անց անձանց այցելություններ են կատարել ինչպես «Հայկական Կարիտասի» ԲՀԿ-ի Վանաձորի գրասենյակը, այնպես էլ դպրոցները:

- «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ ընտրվել են տվյալ ժամանակահատվածում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող մարզի առավել կարիքավոր ընտանիքներ և երեխաներ, որոնց համար իրականացվել է աջակցություն հունվար ամսին սննդի փաթեթների տրամադրում՝ 55 շահառուների, իսկ նույն կազմակերպության ֆինանսավորմամբ հունիս ամսին՝ Վանաձորի երեխաների խնամքի եւ պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությունից թվով 30 երեխա հանգստանում են «Գուգարք» ամառային ճամբարում:

- «Առավոտ» ՀԿ-ի հետ իրականացվում է հատուկ հաստատությունների բեռնաթափման և կանխարգելման ծրագիր:

- «Միհր» ՀԿ-ի միջոցով հագուստ եւ կոշիկ է բաժանվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին:

- UNICEF-ի և «Հայաստանի ֆինանսների միություն» ՀԿ-ի հետ իրականացվում է համայնքային աջակցության ծրագիր, որտեղ Լոռու մարզը շոշափելի արդյունքներ ունի:

✓ «Աշխատանքային միգրացիայի սոցիալական հետևանքների մեղմացում» ծրագրով մարզի երեք համայնքներ շահել են 10 հազարական եվրո դրամաշնորհ: Այդ գումարով Սպիտակում կհիմնվի ջերմոցային տնտեսություն, որտեղ մասնակիորեն կլուծվի հաշմանդամներին աշխատանքով ապահովելու հարցը: Այս ծրագրին աջակցել են Լոռու մարզպետարանը, Սպիտակի քաղաքապետարանը, «Սպիտակ ֆերմեր» ՀԿ-ն, «Կամուրջ» ԲՀԿ-ն, UNDP և «Save the Children» միջազգային կազմակերպությունները:

✓ CISP միջազգային կազմակերպության հետ համատեղ իրականացվում է «Միգրացիայի սոցիալ-տնտեսական դրական ազդեցության ուժեղացումը հայաստանում ավելի լավ ապագայի համար» ծրագիրը:

• Խոցելի խմբերի վերաբերյալ համայնքներում ստեղծվել են տեղեկատվական շտեմարաններ, որոնց հիման վրա էլ ընթանում են օգնության ծրագրերը համայնքներում:

• **Կամավորների շարժման (կենտրոնի) զարգացում, երիտասարդության շրջանում կամավորական շարժման խթանում.** ՀԿ-ների տարբեր ծրագրերում ընդգրկված կամավորների թիվը՝ 84 («Առավոտ» ՀԿ՝ 10, «Հայկական Կարիտաս»՝ 10 (Վանաձոր՝ 2, Տաշիր՝ 8), «Լիարժեք կյանք»՝ 44), «Խաչվող ուղիներ»՝ 3, «Օրբան»՝ 15, «Շող»՝ 2:

• **«Սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում՝ Սոցիալական համալիրների (սոցիալական ծառայություն, զբաղվածության և կենսաթոշակային տարածքային կենտրոններ, ԲՄՓՀ) կառուցում» ծրագրի** իրականացումը ներկայումս ընթանում է պետական մակարդակով՝ առաջնահերթ աշխատանքներ են տարվում սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների մեկտեղման (նույն տարածքում) կամ ինտեգրման ուղղությամբ:

Գուգարքի տարածաշրջանային կենտրոն հանդիսացող Վանաձոր քաղաքի Գ.Նժդեհի փող. թիվ 14 հասցեում 2005թ.-ից գործում է Սոցիալական համալիր կենտրոնը (որպես հանրապետությունում փորձնական առաջին ծրագրի արդյունք): Դեռևս հարմար տարածքներ չեն գտնվել Ստեփանավան, Սպիտակ քաղաքներում, իսկ Ալավերդիում և Տաշիրում առաջարկվել են վերապրոֆիլավորվող տարածքներ:

• **Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների (պետական, ոչ պետական) համակարգչային տեխնիկայով հագեցում և համացանցային կապով ապահովում.** Մարզպետարանի աշխատակազմի թվով 4 սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունները (Սպիտակ, Ստեփանավան, Թումանյան, Տաշիր) աշխատում են կայուն համացանցային կապով ինչպես մարզպետարանի, այնպես էլ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև:

• **Լոռու մարզում տարեցների և հաշմանդամների վիճակի բարելավում.**

✓ ՀԿ-ներում խնամողների մասնագիտական վերապատրաստում անցած կամավորների թիվը 33 որից՝ «Լիարժեք կյանք» ԲՀԿ՝ 20 «Հայկական Կարիտաս»՝ 8 (սոցաշխատող՝ խնամող և բուժքույրեր):

✓ Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների սննդապահովում՝ մարդասիրական ճաշարանների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը՝ 353 («Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի միջոցներով՝ Վանաձոր՝ 140, Ալավերդի՝ 108, Սպիտակ՝ 105, Տաշիրում ծրագիրը փակվել է):

✓ Ծերերի խնամքի ծառայությունների իրականացում (բացի պետական տրանսֆերտներից խնամքի ծառայություններից օգտվող) ծերերի թիվը՝ 160 («Հայկական Կարիտասը» Վանաձորում և Տաշիրում սպասարկում է համապատասխանաբար 100 և 60) տարեցներ:

• **Հաշմանդամություն ունեցող անձանց** (հատկապես՝ հաշմանդամ երեխաների և նրանց ծնողների) ապահովում վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով:

2014թ. առաջին կիսամյակում հաշմանդամություն ունեցող անձանց համար լրացվել է 146 ՎԱԾ (վերականգնողական անհատական ծրագրեր), որից 26 սայլակ, 25 այլ պարագաներ (օրթոպեդիկ կոշիկ, գուլպա), 8 ձեռնափայտ, 13 հենակ, 7 քայլակ, 19 լսողական սարք, պրոթեզավորում՝ 41 անձ (որից՝ 16 կրծքի), ձայնաստեղծ սարք՝ 8: Վանաձորի ՄԾՏԲ-ի կողմից բաշխվել է 32 լսողական սարք: Իսկ «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում»

բարեգործական հիմնադրամի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց բաշխվել է 18 լողական սարք, 19 հենակ և 17 քայլակ:

- **Աջակցություն գրադավածության քաղաքականությանը.** Ջրադավածության բնագավառում ՀՀ կառավարությունը շարունակել է իր քաղաքականությունը և պետական ծրագրերի մասով հատկացումները:

- ✓ Մասնագիտական ուսուցում անցած գործազուրկների թիվը՝ 109 մարդ (որից՝ Վանաձոր՝ 51, Ալավերդի՝ 14, Ստեփանավան՝ 26, Տաշիր՝ 18):

- ✓ Աշխատանքի է տեղավորվել 48 մարդ (Վանաձոր՝ 11, Ալավերդի՝ 7, Ստեփանավան՝ 17, Տաշիր՝ 13):

- **Աջակցություն բնակարանային ապահովման քաղաքականությանը.**

- ✓ Փախստականների ընտանիքների բնակարանային ապահովման ծրագիր

(Ֆինանսական նպատակային հատկացումներ չեն եղել)

- ✓ Ձեռնարկ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովման ծրագիր

(Ֆինանսական նպատակային հատկացումներ չեն եղել):

- **ՄԶԾ առաջարկված փարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների** լուծմանն ուղղված քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցման (մեր կողմից ճշտվել են կառուցման վայրերը և քաղաքային համայնքները պատրաստ են իրենց մասով ներդրումներ կատարել), բնակչությանը սոցիալական ծրագրերի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ու սոցիալապես խոցելի խմբերի կարիքների գնահատմանն ուղղված միջոցառումների իրագործման համար: **Առաջարկված ծրագրով պետական ֆինանսավորում չի կատարվել:** Այսօր առկա է հետևյալ պատկերը՝ քաղաքային համայնքների մշակութային և սպորտային 69 կենտրոններում (որից՝ սպորտային՝ 18 և մշակութային՝ 51): 2014թ. առաջին կիսամյակում կառուցվել է 2 թեքահարթակ:

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1. Գյուղատնտեսություն

Մարզի գյուղատնտեսության ոլորտում 2014թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսվել է **202.00** մլն դրամ, որից **52.0** մլն դրամը պետական բյուջեից (Այրում-Ճոճկան, Շնող-1, Ճոճկան-1 և Ճոճկան-2 պոմպակայանների նորոգման՝ 12.0 մլն դրամ և Լոռու մարզում հակակարկտային կայանների կառուցում՝ 40.0 մլն դրամ (V հրատապ ծրագիր)), ինչպես նաև այլ միջոցներից՝ **150.0** մլն դրամ՝ ոռոգման համակարգերի վերականգնման և «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագիր արտոնների կառավարման և անասնապահության գ ար գ ա գ մ ա ն համար: 2014թ. առաջին կիսամյակում իրականացվել է նախատեսված պոմպակայանների նորոգման աշխատանքները՝ **12.0** մլն դրամ ՀՀ պետբյուջե):

Գյուղատնտեսության ոլորտում 2014 թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2014թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			01.07.14թ	այդ թվում հրատապ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	202.00	12.00		
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	52.00			
	(Այրում-Ճոճկան, Շնող-1, Ճոճկան-1 և Ճոճկան-2 պոմպակայանների նորոգում	12.00	12.00		
II	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	40.00			
1	Լոռու մարզում հակակարկոտային կայանների կառուցում	40.00			
III	ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ				
IV	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ				
V	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ				
VI	ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ	150.00			
	«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագիր Արոտների կառավարում և անասնապահության զարգացում	150.00			

ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մարզի տնտեսության մեջ գյուղատնտեսության ոլորտը ավանդաբար նշանակալից տեղ է զբաղեցրել: Սակայն ներկա շրջանում գյուղատնտեսական արտադրողականության բարձրացումը ՄՋԾ-ի այս ոլորտի ամենակարևոր նպատակներից է: Այս նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ գյուղատնտեսական հեռանկարների վերաբերյալ հստակ պատկերացումներ, հստակ սահմանված ոլորտային գերակայություններ, լավ հիմնավորված ռազմավարություն, ինչպես նաև համատեղ գործողություններ տարածքային կառավարման մարմինների, գյուղատնտեսական ասոցիացիաների, համայնքների և ֆերմերների կողմից, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայություն:

Լոռու մարզի զարգացման ծրագրում առաջնային թիրախներ են.

- ✓ սերմնաբուծական տնտեսությունների հիմնումը հացահատիկային, միամյա ու բազմամյա խոտաբույսերի սերմարտադրության համար
- ✓ բանջարեղենի և պտղի պահպանման սառնարանային տնտեսությունների հիմնում
- ✓ կարտոֆիլի, բանջարեղենի և պտղի վերամշակման արտադրամասերի հիմնում
- ✓ կաթի սառեցման և վերամշակման արտադրամասերի հիմնում:

Կարևորվում է նաև գյուղատնտեսական ենթակառուցվածքների բարելավման աշխատանքները: Այն ներառում է սառնարանային և վերամշակող տնտեսությունների, փոքր

սպանդանոցների, կաթի ընդունման և վերամշակման կետերի հիմնում, համայնքի ոռոգման համակարգերի վերականգնում և այլն: Սրանց մի մասը նախատեսվում է ֆինանսավորվել պետական բյուջեի կողմից, իսկ մյուս մասը պետք է լինի մասնավոր նախաձեռնությունների արդյունք:

2014 թվականի 1-ին կիսամյակում.

«Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային ստորաբաժանման ներկայացուցիչների հետ մշտական ուշադրության և հսկողության տակ է պահվել թունաքիմիկատների, կենսապատրաստուկների վաճառքի և պահպանման պայմանների, բույսերի մշակության ագրոտեխնիկական կանոնների պահպանման ու կիրառման, սերմերի և տնկանյութերի ցանքային պիտանելիության և որակի պահպանման աշխատանքների կազմակերպումը, կատարվել են բույսերի կարանտին հիվանդությունների և վնասատուների հայտնաբերման համար ուսումնասիրություններ:

2014թ. ընթացքում գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական պարարտանյութի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից մարզին հատկացվել է.

- 2000 տոննա ազոտական պարարտանյութ, որի ստացման համար հայտ է ներկայացվել մարզի 73 համայնքների կողմից,
- 36,05 տոննա ֆոսֆորական պարարտանյութ, որի ստացման համար հայտ է ներկայացվել մարզի 10 համայնքների կողմից,
- 29,80 տոննա կալիումական պարարտանյութ, որի ստացման համար հայտ է ներկայացվել մարզի 9 համայնքների կողմից,
- 1.500.000 լիտր դիզելային վառելանյութ, որի ստացման համար հայտ է ներկայացվել մարզի 85 համայնքների կողմից:

«2010-2014թթ. Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային մշակաբույսերի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրի» շրջանակներում մարզին հատկացվել է.

2014թ. գարնանացանի համար մարզին հատկացվել է.

- 100 տոննա գարու սերմացու,
- 4,16 տոննա եգիպտացորենի սերմացու,
- 11,5 տոննա առվույտի սերմացու,
- 13,5 տոննա կորնզանի սերմացու:

2014 թվականին բոլոր մշակաբույսերի առումով մարզում կատարվել է շուրջ 28891 հա ցանք:

2014 թվականի մայիսի 24-ին տեղացած կարկուտի հետևանքով վնասվել է հացահատիկի շուրջ 762 հա և 381 հա կարտոֆիլի ցանքատարածություններ: Հասցված վնասները մեղմելու նպատակով ՀՀ կառավարության կողմից կարկուտից վնաս կրած մարզի 11 համայնքների անհատույց հատկացվել է 95,25 տոննա ազոտական պարարտանյութ և 11430 լիտր դիզելային վառելանյութ, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 14.097 հազար դրամ:

Մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումները կազմակերպելու համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից գարնանը մարզին հատկացվել է 342,12 կգ ցինկի ֆոսֆիդ, որը բաշխվել է գյուղնախարարության կողմից անցկացված մոնիտորինգի հիման վրա հաստատված 16 համայնքների: Պայքարի միջոցառումները իրականացվել է 2851,0 հա-ի վրա:

Ոռոգում

Պետական բյուջեի միջոցներով վերանորոգել է Այրում-Ճոճկան, Շնող-1, Ճոճկան-1 և Ճոճկան-2 պոմպային կայանները:

Վերանորոգման աշխատանքների իրականացման համար պետբյուջեից կատարվել է շուրջ 12,0 մլն դրամ ներդրում:

21.06.2014թ. դրությամբ ԶՕԸ-ների կողմից ոռոգման, ջրարբիացման և համակարգերի շահագործման նպատակներով ջրօգտագործողներին տրվել է 29872 հազար խմ ջուր: Տրված ջրի հասույթը կազմել է 4386,8 հազար դրամ, որից հավաքագրվել է 3778,7 հազար դրամ կամ գանձումը կատարվել է 86,1 %-ով:

Անասնաբուծություն

- Լոռու մարզպետի 5-րդ դեկտեմբերի 2013թ. թիվ 663 կարգադրության համաձայն վերահսկվել է Լոռու մարզի համայնքներում և բոլոր կարգի տնտեսություններում 2012թ. հունվարի 1-17-ը անցկացված անասնազվխաքանակի հաշվառման գործընթացը:
- Ազգային վիճակագրական մարզային վարչության և Լոռու ԳԱՄԿ-ի մասնագետների հետ կատարվել են գյուղատնտեսական մթերքների շուկայական գների դիտարկումներ:
- Սննդամթերքի անվտանգության ծառայության մասնագետների հետ վերահսկվել է մարզի համայնքներում գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների նկատմամբ կանխարգելիչ պատվաստումների ընթացքը:
- Գարնան ամիսներին վերահսկվել են անասունների հիվանդությունների նկատմամբ իրականացվող կանխարգելիչ պատվաստումների ընթացքը:
- Մարզում կաթի մթերման խնդիրների և շուկայական գների ուսումնասիրության հետ կապված այցելություններ են կատարվել մարզի համայնքները:
- Լոռու մարզի սննդամթերքի անվտանգության ծառայության և ԳԱՄԿ-ի աշխատակիցների հետ միասին համայնքների անասնաբույժների հետ իրականացվել է սեմինար խորհրդակցություն «խոզերի աֆրիկյան ժանտախտ» հիվանդություն թեմայով:
- Լոռու մարզում Հայ-Ֆրանսիական համատեղ «Լոռու մարզում անասնաբուծության զարգացման համագործակցություն» ծրագրի շրջանակներում ս.թ. մարտ-հունիս ամիսներին իրականացվել է.
 - ✓ Լոռու մարզի անասնաբուծության գծով 4 մասնագետների այցը Ֆրանսիայի Պրովանս Ալպ Կոտ դ'Ազուր, ուսումնասիրելու ոչխարաբուծության ֆրանսիական եղանակները մարզում կիրառելու նպատակով:
 - ✓ Լուսաղբյուր համայնքում գտնվող «Նանե» սպառողական կոպերատիվին պատկանող անասնաշենքի վերանորոգման համար նախագծա-հաշվարկային աշխատանքներ: Մարզպետի միջնորդությամբ այդ աշխատանքների համար ՀՀ պետական բյուջեից վճարվել է 2.15 մլն դրամ, կամ 5,250 ԱՄՆ դոլար:
 - ✓ Ֆրանսիացի մասնագետների հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի «Նանե» սպառողական կոպերատիվի ոչխարանոցում և Ստեփանավան համայնքում գործող «Քարախաչ» ՍՊԸ-ում, գառների կերակրման հետ կապված փորձնական աշխատանքներ:

3.2. Բնապահպանություն

Մարզի բնապահպանության ոլորտում 2014թ. ՏԱՊ-ով բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսվել է **223.998** մլն դրամ, որից **223.998** մլն դրամն էլ նախատեսված է համայնքային բյուջեներից:

2014թ. առաջին կիսամյակում բնապահպանական խնդիրներով համայնքային բյուջեներից հատկացումներ չեն արվել:

Բնապահպանության ոլորտում 2014 թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2014թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			01.07.14թ	այդ թվում հրատապ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	223.998			
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ				
II	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)				
III	ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ				
IV	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	223.998			
1	ք. Ալավերդում բնապահպանական ծրագրերի իրականացում	120.000			
2	ք. Ախթալայում բնապահպանական ծրագրերի իրականացում	4.500			
3	Աքրոի համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում	30.000			
4	Հազվի համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում	30.000			
5	Հաղպատ համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում	27.000			
6	Օծուն համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում	12.498			
V	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ				
VI	ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ				

• 2014թ. առաջին կիսամյակի ընթացքում «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը Լոռու մարզում իրականացրել է.

- ✓ Ստեփանավան համայնքում անտառտնկման աշխատանքների համար շուրջ 6.7 կմ ցանկապատման աշխատանքներ,
- ✓ Ստեփանավան համայնքում շուրջ 12 հա անտառտնկման աշխատանքներ,

- ✓ Կողես, Կաթնաջուր, Ջրաշեն, Արջուտ և Սարատովկա համայնքներում շուրջ 2.8 կմ ցանկապատի վերանորոգման աշխատանքներ,
 - ✓ Սպիտակ, Կաթնաջուր, Արջուտ, Ֆիդլետովո, Ծաղկաբեր, Ջրաշեն, Ղուսալի, Սվերդլով, Սարատովկա և Կողես համայնքներում շուրջ 450 հա տարածքի վրա նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ:
- 2014թ. աշնանը Ստեփանավան համայնքում նախատեսվում է իրականացնել ևս 65 հա անտառտնկման աշխատանքներ:

Անտառտնկարկների խնամքի և լրացման աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Ավանդական դարձած անտառտնկման աշխատանքներից բացի, հիմնադրամը մարզում իրականացնում է նաև տարաբնույթ բնապահպանական ուսուցողական դասընթացներ, անվճար հիմունքներով համայնքներին է տրամադրում պտղատու և դեկորատիվ տնկիներ:

- Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրով նախատեսված է մինչև 2020թ. հատել 158.1 հա անտառ, իսկ մնացած 198.9 հա-ը՝ 2020թ. և հետագա տարիներին: Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման հետ կապված, ըստ հաստատված բնապահպանական ծրագրի, «Թեղուտ» ՓԲԸ-ն պարտավորվել է կատարել 714 հա անտառտնկման աշխատանքներ, որից 2009-13թթ. ընթացքում մասնագիտացված ձեռնարկությունների միջոցով արդեն իսկ 220 հա համայնքային (73 հա՝ Լեռնահովիտ, 50 հա՝ Թեղուտ, 50 հա՝ Արջուտ, 30 հա՝ Օձուն, 17 հա՝ Շնող) և 158.5 հա անտառային ֆոնդի տարածքների վրա կատարվել են անտառտնկման, ցանկապատման և խնամքի աշխատանքներ: 2014թ. գարնանը նույն ծրագրի շրջանակներում «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում իրականացվել է նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացում 20 հա:

- WWF ծրագրով.
 - ✓ «Թռչկան» ջրվեժի՝ բնության հուշարձանի հարևանությամբ, նախկինում անտառպատված 20 հա տարածքի վրա իրականացվել են անտառային մշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ:
 - ✓ «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում բնական վերաճին օժանդակելու նպատակով իրականացվել է 50 հա անտառային տարածքի ցանկապատում:
- ՀՀ պետական բյուջեի կողմից 2011-2014թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզի համայնքներին տրամադրված գումարների վերաբերյալ տվյալները հետևյալն են.

հազ. դրամ

Համայնքներ	Տարիները			
	2011	2012	2013	2014
Այվերդի	55 155.9	94 411.5	110 000.0	120 000.0
Հաղպատ	18 600.0	23 602.8	25 000.0	27 000.0
Օձուն	18 600.0	23 602.9	58 664.8	12 498.4
Աքրի	11 712.0	23 602.8	28 000.0	30 000.0
Հազվի	800.0	8 000.0	50 000.0	30 000.0
Ախթալա	1 000.0	1 500.0	3 500.0	4 500.0
Ընդամենը	113 067.9	174 720.0	275 164.8	223 998.4

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին 2015թ. համար նախատեսվում է.

- ✓ Ալավերդի համայնքին - 94 677.0 հազ. դրամ;
- ✓ Օձուն համայնքին - 7 511.4 հազ. դրամ;
- ✓ Հաղպատ համայնքին - 27 470.6 հազ. դրամ;
- ✓ Աքրոի համայնքին - 20862.2 հազ. դրամ;
- ✓ Հազվի համայնքին - ----- հազ. դրամ;
- ✓ Ախթալա համայնքին - 375.3 հազ. դրամ:

Ելնելով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով ընձեռնված հնարավորությունից, միջնորդություն է ներկայացվել ՀՀ բնապահպանության նախարարություն, որպեսզի Լոռու մարզի Ստեփանավան և Ուրասար համայնքները («Սագամար» ՓԲԸ՝ շահագործում է Արմանիսի ոսկու-բազմամետաղային հանքավայրը) նույնպես ընդգրկվեն վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկում ու բնապահպանական ծրագրեր իրականացնելու համար պետական բյուջեից սահմանված կարգով ստանան մասնահանումներ:

Ակնկալվող բնապահպանական նպատակային գումարները էապես կնպաստեն նշված համայնքների ազգաբնակչության առողջության և շրջակա միջավայրի պահպանման գործում:

• 2012թ. Ախթալայի ԼՀԿ-ի «Նազիկ» պոչամբարի 1 հա-ի վրա իրականացվել են ռեկուլտիվացիայի և ծառատունկի աշխատանքներ: Պարբերաբար իրականացվող մոնիտորինգի արդյունքները փաստում են կատարված աշխատանքի բարձր արդյունավետության մասին: Ախթալայի ԼՀԿ-ի ղեկավարությունը մեծ ոգևորությամբ է ընդունում կատարված աշխատանքը և խոստանում հնարավորության դեպքում իրականացնել նաև այլ կոնսերվացված պոչամբարների նմանատիպ ռեկուլտիվացման աշխատանքներ:

• Հայ-Գերմանական Ֆինանսական Համագործակցության շրջանակներում իրականացվում է «Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման հայեցակարգ, ք. Վանաձոր» ծրագիրը: Ծրագրի փորձագետների կողմից նոր աղբավայր կառուցելու համար հավանության է արժանացել Քարաձոր համայնքի հարակից տարածքը: Նոր եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայրի կառուցման դեպքում, ծրագիրը ենթադրում էր, որ աղբավայրից կօգտվեն ոչ միայն Վանաձոր և Սպիտակ քաղաքները, այլև Գուգարքի և Սպիտակի տարածաշրջանի գրեթե բոլոր գյուղական համայնքները: Ներկայումս ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ծրագրին առաջարկվել է դիտարկել ոչ միայն վերը նշված տարածաշրջանները, այլ ամբողջ մարզը և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքը: Նոր աղբավայրը կլուծի նաև համայնքներում տարերայնորեն առաջացած ապօրինի աղբավայրերի լիկվիդացման հարցը:

• Մարզպետարանի կողմից տարվող հետևողական աշխատանքի շնորհիվ, մարզի մի քանի գյուղական համայնքներ ևս ձեռք են բերել աղբարկղներ և սկսել են կատարել կանոնակարգված աղբահանության աշխատանքներ:

• Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համատեղ մշակվում և պարբերաբար անց են կացվում «Անտառների հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով շտաբային ուսումնավարժություններ: 2014թ ապրիլ-մայիս ամիսներին ըստ ՀՀ Լոռու մարզպետի կողմից հաստատված ժամանակացույցի՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, Լոռու մարզի շահագրգիռ կազմակերպությունների և համայնքների մասնագիտացված խմբերի ու արձագանքող ուժերի մասնակցությամբ անց է կացվել շտաբային ուսումնավարժություն:

• «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, ՀՀ Ոստիկանության մարզային վարչության, բնապահպանության նախարարության ԲՊՏ Լոռու տարածքային բաժնի հետ պարբերաբար

ամփոփվել է մարզի տարածքում ապօրինի ծառահատումների, փայտանյութի անօրինական տեղաշարժի և օրինախախտումների վերաբերյալ տվյալները:

- Լոռու մարզի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում 2014թ. հունվար-մայիս ամիսների ընթացքում հայտնաբերված ապօրինի հատումները կազմել են 135 ծառ – 53.27 խտացված մ³ ընդհանուր ծավալով:

- 2014թ. հուլիս-մայիս ամիսների ընթացքում Ոստիկանության Լոռու մարզային վարչության և ոստիկանության բաժինների կողմից կատարվել է 229 ստուգայց, հայտնաբերվել են ապօրինի անտառհատումների, փայտանյութի տեղափոխման և իրացման 20, պետությանը հասցված վնասի չափը կազմել է 2 մլն. 205 հազ. դրամ, որից վերականգնվել է 1 մլն. 50 հազ. դրամը: Հարուցվել է 1 քրեական գործ, վարչական պատասխանատվության են ենթարկվել 7-ը:

- 2014թ. մարզի անտառհատումների տարեկան առաջադրանքը 8690 մ³ է, հունվար-մայիս ամիսների ընթացքում օրինական (պլանային) հատումները կազմել են 2653.7 մ³:

- 2013թ. հունվար-մայիս ամիսների ընթացքում մթերվել է 121.75 մ³ թափուկ վառելիքային:

- Մարզի ընդերքի օգտագործման և օրինակության վերաբերյալ պահանջվող ձևաչափով համապատասխան գերատեսչություններին պարբերաբար ներկայացվել են տեղեկանքներ:

- «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ կազմակերպվել և անց են կացվել տարաբնույթ հասարակական լսումներ և քննարկումներ:

- Տպագրվել է «Աղետների ռիսկերի նվազման և Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված պլանավորում Լոռու մարզում» թեմայով 38 էջից բաղկացած վերլուծական տեղեկատվական ձեռնարկ, որի կազմմանը անմիջապես մասնակցել են Լոռու մարզպետարանի բնապահպանության բաժնի մասնագետները:

- Առաջարկություններ են ներկայացվել Վանաձորի Տեխնոլոգիական կենտրոնի (տեխնոպարկի) բնագավառների ընտրության և անհրաժեշտ լաբորատոր սարքավորումների ցանկի ներկայացման գործընթացում:

- Մարզի հանքարդյունաբերական կենտրոններում (Ալավերդի, Թեղուտ, Արմանիս, Ախթալա) պարբերաբար անց են կացվում լեռնարդյունաբերական գործունեության հետևանքով առաջացող ռիսկերի գնահատման և դրանց մեղմացմանն ուղղված հանդիպում-քննարկումներ: Հանդիպումներին մասնակցում են թիրախային համայնքների ղեկավարներ, ակտիվ քաղաքացիներ, ՀԿ-ների, ՋԼՄ-ների, պետական կառույցների, ինչպես նաև հիմնարկ-ձեռնակությունների և այլ շահառու կողմերի ներկայացուցիչներ:

- Քննարկվել և համապատասխան առաջարկություններ են ներկայացվել բնապահպանական օրենսդրությանը վերաբերվող մի շարք նախագծերի վերաբերյալ:

- Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.37 կետը, բնապահպանության և ընդերքօգտագործման բնագավառներում համաձայն տրված հարցաշարերի Լոռու մարզի Ալավերդի, Թեղուտ, Դսեղ, Սարատովկա և Լերմոնտովո համայնքներում իրականացվել է վարչական հսկողություն, որոնց արդյունքները ներկայացվել են տարածքային կառավարման նախարարություն:

- Մարզի բնապահպանական կարևոր խնդիրների քննարկումները, հասարակական լսումները հիմնականում անց են կացվում մարզպետարանի նիստերի դահլիճում և մարզում գործող երեք բնապահպանական տեղեկատվական Օրհուս կենտրոններում (Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան): Հասարակական լսումներին մասնակցում են, ինչպես համապատասխան գերատեսչությունների և կազմակերպությունների փորձագետներ, այնպես էլ շահագրգիռ ՏԻՄ-երի, բնապահպանական ՀԿ-ների, ՋԼՄ-ների և հասարակության ակտիվ ներկայացուցիչներ:

4. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. քաղաքաշինության ոլորտի. (բնակարանաշինություն և բնակարանային տնտեսություն ու բարեկարգում) 2014թ համար պահանջվող գումարը եղել է **3,703.193** մլն դրամ, սակայն ՏԱՊ-ով փաստացի պլանավորվել է կատարել **1,060.00** մլն դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **200.00** մլն դրամը պետ. բյուջեով (<< Պաշտպանության նախարարություն), **860.00** մլն դրամը՝ մասնավոր ներդրումներով:

Մարզի քաղաքաշինության ոլորտում 2014թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված **1,095.00** մլն դրամի (**1,095.00 մլն դրամ = 1,060.00 մլն դրամ՝ ՏԱՊ + 35.00 մլն դրամ՝ հրատապ V փուլ**) դիմաց՝ առաջին կիսամյակում իրականացվել է **995.00** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետ. բյուջեից նախատեսված **235.00** մլն դրամի (**235.00 մլն դրամ = 200.00 մլն դրամ՝ ՏԱՊ + 35.00 մլն դրամ՝ հրատապ V փուլ**) դիմաց՝ 135.00 մլն դրամի աշխատանքներ (35.00 մլն դրամը՝ հիրատապ V փուլի ծրագրով) և **860.00** մլն դրամի՝ մասնավոր ներդրողների միջոցներով:

Աղյուսակում բերված են կրթության ոլորտում 2014թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների:

Քաղաքաշինության ոլորտում 2014 թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2014թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			01.07.14թ	այդ թվում հրատապ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	1,095.00			
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	235.00			
	Վանաձորում բնակելի շենքերի վերանորոգում (48 բնակարան)	200.00			ՀՀ ՊՆ
II	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	35.00			
	Նախագծային աշխատանքներ	33.30			
	Տեխնիկական վիճակի հետազոտման աշխատանքներ	1.70			
III	ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ				
IV	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ				
V	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ				
	Վանաձորի Տգրան Մեծի 47 հասցեում բազմաբնակարան շենքի կառուցում	860.00			
VI	ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ				

5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

5.1. Ճանապարհաշինություն

Մարզի ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 932.9 կմ, այդ թվում՝ միջպետական ա/ճ - 218.9 կմ, հանրապետական ա/ճ - 490.9 կմ, մարզային ա/ճ - 223.1կմ: Մարզում կան

- կամուրջներ և կամրջային անցումներ – 175 հատ
- ավտոմոբիլային թունելներ – 5 հատ

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. ճանապարհաշինության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **5,198.00 մլն** դրամ, սակայն բոլոր աղբյուրներով ճշգրտված պլանով նախատեսվել է կատարել **929.683 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝ **827.698** մլն դրամը՝ ՀՀ պետբյուջեի միջոցներով (որից **446.60** մլն դրամը հրատապ աշխատանքների V փուլի ծրագրով) և **101.9852** մլն-ը՝ համայնքային ֆոնդային բյուջեների ֆինանսավորմամբ:

2014թ. առաջին կիսամյակում մարզի ճանապարհաշինական ոլորտում իրականացվել է **38.802** մլն դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում պետական բյուջեից՝ **30.60** մլն դրամի՝ մարզային ա/ճանապարհների պահպանման և շահագործման համար: Համայնքային ֆոնդային բյուջեների ֆինանսավորմամբ իրականացվել է **8.202** մլն դրամ ծավալով փողոցների վերանորոգման աշխատանքներ:

Ճանապարհաշինության ոլորտում 2014 թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2014թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			01.07.14թ. (մլն դրամ)	այդ թվում հրատապ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	929.683	38.802		
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	827.698	30.60		
	ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	313.097			
	Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում	313.097			
1	Ա/ճ Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման, կմ32+240 կամուրջի	92.097			
2	Ա/ճ Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման, կմ32 թունելի հիմնանորոգում	138.00			
3	Պուշկինի լեռնանցքի թունելի հիմնանորոգում	83.00			
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	514.601			
1	Մարզային ա/ճանապարհների պահպանում եւ շահագործում	68.001	30.60		
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	446.60			
	Համայնքային նշանակության ա/ճանապարհների ասֆալտապատում եւ կամուրջների նորոգում, այդ թվում՝	446.60			

1	Վանաձոր համայնքի ճանապարհների նորոգում և ասֆալտապատում	120.00		
2	Ստեփանավան համայնքի ճանապարհների նորոգում և ասֆալտապատում	87.40		
3	Տաշիր համայնքի ճանապարհների նորոգում և ասֆալտապատում	33.00		
4	Հորարձի համայնքի ճանապարհի նորոգում և ասֆալտապատում	20.80		
5	Սպիտակ համայնքի ճանապարհների նորոգում և ասֆալտապատում	44.50		
6	Ալավերդի համայնքի ճանապարհների նորոգում և ասֆալտապատում	61.50		
7	Բազում համայնքի ճանապարհների նորոգում և ասֆալտապատում	8.32		
8	Գյուլագարակ համայնքի ճանապարհների նորոգում և ասֆալտապատում	26.00		
9	Վանաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատում	36.68		
10	Թումանյան համայնքի ճանապարհների նորոգում և ասֆալտապատում	5.25		
11	Քարաբերդ համայնքի կամրջի նորոգում	3.15		
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	101.9852	8.2015	
	Ճանապարհների վերանորոգում հետևյալ համայնքներում, այդ թվում՝	101.9852		
1	Վանաձոր	15.0000		
2	Գուգարք	9.5650	2.7466	
3	Ստեփանավան	6.5540		
4	Կուրթան	5.3097		
5	Վարդաբլուր	3.1457		
6	Ամրակից	1.0000		
7	Ուրասար	0.1884		
8	Կաթնաղբյուր	3.0000		
9	Բովաձոր	0.2222		
10	Շամլուղ	0.8000		
11	Թեղուտ	1.1000		
12	Ճոճկան	0.8000		
13	Մեծ Այրում	0.4000		
14	Շամուտ	0.1600		
15	Լեռնահովիտ	2.6800		
16	Նովոսելցովո	0.3100		
17	Լուսաղբյուր	1.0000		
18	Կաթնաջուր	6.1500		
19	Ծաղկաբեր	1.0000		
20	Արևաշող	1.5000		
21	Գեղասար	0.5000		
22	Շենավան	0.7000		
23	Գոգարան	0.7000		
24	Ղուրսալի	0.9500		

25	Դարպաս	1.0154	1.0154		
26	Ալավերդի	3.8747	3.5039		
27	Դսեղ	3.3000			
28	Թումանյան	0.9768			
29	Ջրաշեն	10.5000			
30	Լեռնավան	2.3562	0.9356		
31	Սարահարթ	0.6000			
32	Քարաբերդ	1.0731			
33	Եղեգնուտ	2.6344			
34	Ֆիդլետովո	12.6195			
35	Շահումյան	0.3000			

5.2. Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրամատակարարումը մարզում իրականացվում է «Հայջրմուղկոյուղի» և «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությունների միջոցով և տեղական ինքնկառավարման մարմինների կողմից: Խմելու ջուրը ռազմավարական ռեսուրս է, որը չի մատակարարվում շատ համայնքներում, չնայած որ մարզի շատ բնակավայրերում գոյություն ունեն ջրի բնական պաշարներ:

Լոռու մարզի կարևոր հարստություններից են հանդիսանում խմելու համար պիտանի, բարձր որակի ջրի մեծ պաշարները, որը ներկա իրավիճակում գերազանցում են անհրաժեշտ պահանջարկը: Ջրամատակարարման համակարգը մարզի բնակչությանը և արդյունաբերությանը տարեկան տրամադրում է մոտ 17.1 մլն մ³ խմելու ջուր, որը սպառողին է հասցվում ինքնահոս եղանակով և պոմպակայանների միջոցով: Մարզի ջրային ցանցի երկարությունը 3395.23 կմ է, ջրի ծախսը՝ 1250 լիտր/վրկ, որից ճնշումային՝ 520 լիտր/վրկ: Մարզի 7 քաղաքների և 56 գյուղերի ջրամատակարարումն ու ջրահեռացումը (Ջ և Ջ) կատարվում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ «Հյուսիս արևելյան» տարածքային մասնաճյուղի և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջոցով: Մարզի մյուս բնակավայրերի, հատկապես գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անբարվոք ու մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչության ջրամատակարարման հարցում:

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. ջրամատակարարման ոլորտի համար պահանջվող գումարը կազմում է **2,941.423** մլն դրամ, փաստացի ՏԱՊ-ով պլանավորվել է կատարել **4,308.47 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝ **4,252.423** մլն-ը՝ ՀՀ պետբյուջեի վարկային միջոցներով և **56.0489** մլն դրամը՝ համայնքային ֆոնդային բյուջեների միջոցներով:

«Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող Վանաձոր քաղաքի և 16 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավումը իրականացվում է գերմանական վերականգնման բանկի (KfW) և ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորվող ծրագրի միջոցով՝ 2014թ.-ին նախատեսված էր իրականացնել **1,586.6** մլն դրամի աշխատանք:

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի համար պահանջվող գումարը կազմում **4,980.5** մլն դրամ:

2014 թվականի առաջին կիսամյակում մարզի համայնքների խմելու ջրի մատակարարման բարելավման նպատակով կատարվել է շուրջ **1,536.29** մլն դրամի համապատասխան աշխատանքներ, այդ թվում՝ պետ բյուջեի վարկային միջոցներով՝ **1,530.30** մլն դրամի և համայնքային ներդրումներով՝ **5.99** մլն դրամի աշխատանքներ:

Ջրամատակարարման ոլորտում 2014 թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2014թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			01.07.14թ. (մլն դրամ)	այդ թվում հրատապ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	4,308.47	1,536.29		
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	4,252.423	1,530.30		
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)				
	ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ	4,252.423	1,530.30		
	KFW-Գերմանական վարկային ծրագիր «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում ջրամատակարարման բաշխիչ ցանցերի կառուցում	1,442.42	310.70		
	«Եվրոպական վերակառուցման» և «Ասիական բանկի» ծրագրեր «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 համայնքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում	2,810.00	1,219.60		
	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊ., ԴՈՆՈՐՆԵՐ				
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	56.0489	5.9943		
	Ջրամատակարարման համակարգերի վերանորոգում հետևյալ համայնքներում				
1	Գուգարք	2.845	0.648		
2	Բազում	5.7053	0.55		
3	Ուրասար	0.3			
4	Կաթնաղբյուր	2			
5	Ուռուտ	0.3			
6	Շամլուղ	0.5			
7	Արդվի	0.028	0.028		
8	Թեղուտ	1			
9	Հաղպատ	1	0.262		
10	Մարց	0.305	0.305		
11	Մեծ Այրում	0.5			
12	Մղարթ	1.9			
13	Քարինջ	0.25			
14	Նորաշեն	1	0.5		
15	Լեռնահովիտ	2.5	0.3		
16	Կաթնառատ	0.5			
17	Միխայելովկա	0.6			

18	Մեդովկա	0.8			
19	Նովոսելցովո	0.15			
20	Պրիվոլնոյե	3			
21	Լուսադբյուր	0.9533			
22	Լեոնանցք	1.95			
23	Կաթնաջուր	3			
24	Ծաղկաբեր	1			
25	Շիրականուտ	0.9792			
26	Արևաշող	2.2	1.0463		
27	Սարամեջ	1.65	0.85		
28	Նոր Խաչակապ	0.4			
29	Շենական	0.6			
30	Ղուրսալի	0.98			
31	Սարահարթ	0.6			
32	Գոգարան	1.93			
33	Լեոնական	2.88	1.505		
34	Ջրաշեն	10.568			
35	Լորուտ	0.9			
36	Ծաղկաշատ	0.175			
37	Ջիլիզա	0.1			

5.3. Գազամատակարարում

Գազաֆիկացումը մարզի զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է: Երկարատև ձմեռները և այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում են բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Համայնքներում գերակա խնդիր է համարվում գազամատակարարման ցանցի կառուցումը: Գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում նշանակում է շուրջ 10-12մ³ վառելափայտի խնայողություն, որն իր հերթին կնպաստի անտառահատումների, էկոլոգիայի և դրանից բխող պրոբլեմների լուծմանը: Ավելի էժան վառելիքի առկայությունը կարող է նպաստել սահմանամերձ համայնքների զարգացմանը, ինչը հանրապետության համար ունի ռազմավարական նշանակություն: «Հայֆուսգազարդ»-ի ներդրումները բավարար չեն ապահովելու համար գազամատակարարումը նույնիսկ հիմնական գազատարին կից համայնքներում, քանի որ նման միացումները փոքր համայնքներին տնտեսապես ձեռնտու չեն:

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. գազաֆիկացման ոլորտի համար պահանջվող գումարը կազմել է **261.80** մլն դրամ, փաստացի ՏԱՊ-ով գազաֆիկացման աշխատանքներ չեն պլանավորվել:

2014թ.-ի առաջի կիսամյակում գազաֆիկացման աշխատանքներ չեն իրականացվել:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. տարեկան աշխատանքային պլանով առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Մարզպետարանի աշխատակազմի 18 քաղաքացիական ծառայողներ մասնակցել են մասնագիտական վերապատրաստման դասընթացներին, 18 քաղաքացիական ծառայողներ ատեստավորվել են:
2. Համայնքապետարանների աշխատակազմերից համայնքային ծառայողների մասնագիտական վերապատրաստման դասընթացներին մասնակցել են թվով 140 համայնքային ծառայողներ:
3. Պարբերաբար կազմակերպվել են մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների այցելությունները համայնքներ, որոնք ուղեկցվել են տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքների բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, և բնակչությունը հնարավորություն է ունեցել ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն ու բացատրություններ իրենց հուզող հարցերի վերաբերյալ:
4. Համայնքների ղեկավարների կողմից 2013 թվականի բյուջեների կատարման հաշվետվությունները ավագանու հաստատմանը ներկայացնելու ժամանակ մարզպետը, մարզպետի տեղակալները, մարզպետարանի պատասխանատու աշխատակիցները ընտրանքային կարգով մասնակցել են համայնքների ավագանու նիստերին:
5. Մարզպետի, մարզպետի տեղակալների, մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ մարզային հեռուստաալիքով կազմակերպել են ուղիղ եթերներ, հանրությանը հնարավորություն ընձեռելով իրենց հուզող հարցերն ուղիղ կապով իրավասու անձին ուղղելու և պատասխանը անմիջապես լսելու համար:
• Մարզպետարանի ժամ • հեռուստածրագրով յուրաքանչյուր շաբաթ մարզի բնակչությունը տեղեկացվել է մարզպետարանի աշխատակազմի գործառույթներին և մարզում առկա խնդիրներին, ինչպես նաև լուսաբանվել են համայնքների ղեկավարների կատարած աշխատանքները:
6. Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները մասնակցել են մարզխորհրդի նիստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորված ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:
7. 2014թ. առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է մարզպետարանի ինտերնետային կայք էջի թարմացման աշխատանքները, հանրային իրազեկման նպատակով կայքում տեղադրվել են մարզպետի որոշումներն ու կարգադրությունները, համայնքների ավագանիների որոշումները, համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթների հայտարարությունները: Հանրային քննարկում ապահովելու նպատակով

մարզպետարանի ինտերնետային կայքում տեղադրվել են օրենքների և այլ իրավական ակտերի նախագծեր:

8. 2014թ. առաջին կիսամյակի ընթացքում ուշադրություն է դարձվել համայնքապետարաններում և համայնքի բնակչության համար առավել տեսանելի վայրերում տեղեկատվական ցուցատախտակների առկայությանը, և որպեսզի այդ տախտակների վրա պարբերաբար տեղադրվեն համայնքների ղեկավարների և ավագանիների որոշումները, ինչպես նաև այլ կարևոր բնույթի տեղեկատվություն:
9. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կազմակերպվել և կառավարման ակադեմիայի կողմից անց է կացվել թվով 12 համայնքների ղեկավարների և ավագանու 81 անդամների վերապատրաստում:
- 10.1-ին կիսամյակի ընթացքում մարզի 19 համայնքներում իրականացվել է վարչական հսկողություն:
11. Միջոցներ են ձեռնարկվել համայնքների կողմից համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի (<ԿՏՀ) ներդրման, մարզպետարանի և մարզի բոլոր համայնքների միջև էլեկտրոնային կապ ստեղծելու ուղղությամբ: Շարունակվել են մարզպետարանի և մարզի համայնքների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության՝ <ԿՏՀ «Mulberry» համակարգի ներդրման
12. աշխատանքները: Շարունակվել են աշխատանքները մարզի համայնքների ինտերնետային կայքէջերի ստեղծման և դրանց կանոնավոր գործունեության ապահովման ուղղությամբ:
13. Խորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել համայնքների ղեկավարներին՝ աշխատակազմերի արդյունավետ գործող և օպտիմալ կառուցվածքներ ունենալու, ինչպես նաև դրանց համապատասխան համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու ուղղությամբ:
14. Ուշադրություն է դարձվել համայնքների զարգացման քառամյա ծրագրերի, համայնքային բյուջեների կազմման և բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների հաստատման հրապարակայնության գործընթացի վրա: Հաշվի է առնվել նաև տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության համար հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպումը: Համագործակցելով «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հետ իրականացվել են տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցությունն ապահովող մեխանիզմների ներդրման և կիրառման խթանմանն ուղղված դասընթացներ:
15. Հաշվի առնելով ՏԻՄ-երի կարիքները մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրվել է անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն:
16. Կարևորելով ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացումը և տեղական եկամուտների հավաքագրման աճի ապահովումը՝ մարզի բոլոր համայնքների ղեկավարներին և նրանց աշխատակազմերին մշտական խորհրդատվական, մեթոդական, գործնական օգնություն է ցուցաբերվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կազմակերպման հարցում: Իրականացվել

են բյուջեների սեփական եկամուտների ցածր հավաքագրում ունեցող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերլուծություններ և արդյունքները քննարկվել են մարզպետի տեղակալների կողմից անցկացված խորհրդակցությունների ժամանակ:

17. Շարունակվել են համանքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (շենքերի, շինությունների) գույքային իրավունքների պետական գրանցումների աշխատանքները:

7. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

Արտաքին կապերի բնագավառում մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված Լոռու մարզում 2014թ-ի 1-ին կիսամյակում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

«Լոռու մարզի եւ Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս - Ալպ Կոտ դ'Ազյուր (ՊԱԿԱ) ռեգիոնի միջև 2012թ-ի դեկտեմբերի 10-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքում կնքված «2012-2014թթ համագործակցության համաձայնագրի» շրջանակներում Լոռու մարզում նախատեսված մի շարք ծրագրեր հասցվել են ավարտական փուլին- մյուս մասն էլ ընթացքի մեջ են՝

- Ֆրանկոֆոնիայի զարգացում (կրթություն եւ մշակույթ) – շարունակական է
- Զբոսաշրջության զարգացում (այդ թվում՝ գյուղական տուրիզմ) – ծրագրի 1-ին փուլն ավարտվել է, նախատեսվում է շարունակականություն
- Տնտեսության զարգացման (այդ թվում՝ անասնապահություն-անասնաբուծություն) ծրագրի 1-ին փուլն ավարտվել է, նախատեսվում է շարունակականություն
- Համերաշխություն (այդ թվում՝ առողջապահություն եւ սոցիալական ապահովություն)- ավարտված է
- Մասնավորապես 2013-2014թթ. նախատեսվում են՝
 - ❖ Ստեղծվել է միջհամայնքային զբոսաշրջության կենտրոն Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանում – կենտրոնը գտնվում է Ալավերդի քաղաքում, տարածքը հիմնանորոգվել է, տրամադրվել է առաջին անհրաժեշտության համար գրասեղան եւ համակարգիչ, ապահովված է հեռախոսակապով եւ ինտերնետով: Հաջորդ կիսամյակում նախատեսվում է տեխնիկական վերազինում եւ կահավորում
 - ❖ Սպիտակի տարածաշրջանի Լուսաղբյուր գյուղում նախատեսվող ավանդական կամ փորձարարական ոչխարաբուծական ֆերմայի համար կազմվել է նախագծա-նախահաշվային փաստաթղթեր, որի ֆինանսավորումը նախատեսվում է հաջորդ երկու փուլերի համար
 - ❖ Ֆրանսիայի ՊԱԿԱ ռեգիոն են մեկնել անասնաբուծության բնագավառների մասնագետներ (գյուղատնտեսության վարչություն, կոլեկտիվ տնտեսություն, Ստեփանավանի գյուղատնտեսական քոլեջ), որոնք ուսումնասիրել են ֆրանսիական փորձարարական ոչխարաբուծական ֆերմաների աշխատանքը: Վերադառնալով մեր մասնագետները տեղերում սկսել են ֆրանսիական մեթոդով կենդանիների աճեցման եւ բուժման փորձեր իրականացնել
 - ❖ Ֆրանսիական ԳՐԵՖ կազմակերպությունը մարտ-ապրիլ ամիսներին շարունակել է ֆրանսերեն լեզվի դասավանդողների վերապատրաստման դասընթացներ ՎՊՄԻ-ում, Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղում, մարզի այն կրթական հաստատություններում, որտեղ դասավանդվում է ֆրանսերեն

